Հովհաննես Թումանյան

Սուտասանը

1

Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Էս թագավորը իր երկրում հայտնում է .

Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան:

Գալիս է մի հովիվ: Ասում է .

Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

Կպատահի՛, պատասխանում է թագավորը: Իմ պապն էլ մի չիբուխ ուներ, մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում:

2

Գալիս է մի դերձակ: Ասում է .

Ներողությո՛ւն, թագավո՛ր, ես վաղ պիտի գայի, ուշացա: Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու:

Հա՛, լավ ես արել, ասում է թագավորը, բայց լավ չէիր կարկատել, էս առավոտ էլ մի քիչ անձրև թափվեց:

Սա էլ է դուրս գնում:

3

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կռնատակին:

Դո՞ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ,– հարցնում է թագավորը: Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

Մի կոտ ոսկի՞– զարմանում է թագավորը: Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ:

Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

Չէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում,— խոսքը փոխում է թագավորը:

Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր: